

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«ՄԵԼ-ՍԱՐ»

ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ «ՍԻՍ 1221» ԱՎԱԶԻ ԵՐԵՎԱԿՈՒՄՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ 2023-2024ԹԹ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ԵՐԿՐԱԲԱՆԱՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ/

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

«ՄԵԼ-ՍԱՐ» ՍՊԸ

տնօրեն՝

Ալվարդ Գուրգենյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	3
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	5
Նախատեսվող գործունեության բնութագիրը	8
Նախագծման նորմատիվ-իրավական հենքը	12
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	16
Գտնվելու վայրը	16
Ռեյիեֆ, երկրաձևաբանություն, սեյսմիկ բնութագիր, սողանքներ	19
Շրջանի կլիման	23
Մթնոլորտային օդ	26
Ջրային ռեսուրսներ	27
Հողեր	31
Բուսական և կենդանական աշխարհ	33
Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ	35
3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	40
Ենթակառուցվածքներ	40
Հողերի տնտեսական յուրացման բնութագիր	43
Պատմության, մշակութային հուշարձաններ	44
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	45
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	48
6. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ	52
7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ Գրականություն	55

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Երկրաբանական ուսումնասիրություններ` ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտաձին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել կամ վերագնահատել օգտակար հանածոների պաշարները.

Ընդերքօգտագործման իրավունք` համապատասխան ընդերքօգտագործման համաձայնությունով կամ թույլտվությունով, ծրագրով կամ նախագծով, ընդերքօգտագործման պայմանագրով, լեռնահատկացման ակտով հավաստվող` ընդերքի որոշակի տեղամասի երկրաբանական ուսումնասիրության կամ օգտակար հանածոների արդյունահանման բացառիկ իրավունքներ.

Գետաողողատային տիպի հանքավայր` գետերի ողողատային տարածք, որը պարունակում է գետի վարարումների հետևանքով կուտակված ավազի (ավազակոպճային, ավազակոպճազլաքարային խառնուրդի) վերականգնվող պաշարներ, որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական` երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտումն գնահատում

Բնապահպանական կառավարման պլան` ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի` որոշակի ժամանակի ընթացքում

Բույսերի Կարմիր գիրք` միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Կենդանիների Կարմիր գիրք` միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման

եզրին գտնվող կենդանիների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Հող` երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին` կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

Հողի բերրի շերտ` հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով Խախտված հողեր` առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր

Ռեկուլտիվացում` խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով` տեխնիկական և կենսաբանական

Ազդակիր համայնք` շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն` ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով մշտադիտարկումներ` ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային ծրագրերին զուգընթաց` երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով, օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային նախագծով, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով և ազդեցության գնահատման հաշվետվությամբ ամրագրված ցուցանիշների հիման վրա իրականացվող մշտադիտարկումներ

Արտադրական լցակույտեր` օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման կամ վերամշակման արդյունքում առաջացած ընդերքօգտագործման թափոններ (այդ թվում` պոչանքներ)` տեղադրված երկրի մակերևույթի վրա կամ լեռնային փորվածքներում:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

▪ Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

ՀՀ Արարատի մարզի Միսի երևակման տարածքում նախատեսում է իրականացնել ավազի երևակման երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Սն ջուր գետից հայցվող տարածքի հեռավորությունը կազմում է 2,2կմ:

Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընկերությանը երկրաբանական ուսումնասիրության համար տրամադրած տարածքը զբաղեցնում է 20հա մակերես և սահմանափակվում է ստորև նշված ծայրակետային կոորդինատներով (ARM WGS – 84 համակարգով).

Երևակման հայցվող տարածքի ծայրակետերի կոորդինատներն են WGS-84 (ARMREF 02) կոորդինատային համակարգով:

- | | | | |
|---------------|-------------|---------------|-------------|
| 1. X- 4434907 | Y - 8447419 | 4. X- 4434711 | Y - 8448147 |
| 2. X- 4434997 | Y - 8447707 | 5. X- 4434442 | Y - 8448013 |
| 3. X- 4434774 | Y - 8448246 | | |

Միսի ավազակոպճային խառնուրդի երևակումը տեղակայված է Արարատյան դաշտավայրի կենտրոնական մասում, Մասիսի ենթաշրջանի Միս համայնքի վարչական տարածքում: Ընկերությունը իր առջև դրել է ծրագիր, որ եթե կունենա ԱԿԽ-ի որակական և քանակական դրական արդյունքներ և հետագայում այն կշահագործի, ապա նույն տարածքի վրա կկազմակերպի ձկնարդյունաբերություն:

Շրջանի երկրաբանական կառուցվածքը.

Ուսումնասիրվող ՄԻՍ 1221՝ ավազի երևակումը գտնվում է Սն ջուր և Հրազդան գետերի միջև, դրանց ու Արաքս գետի մեանդրման արդյունքում ձևավորված Արարատյան իջվածքի ակումուլյատիվ լճադարավանդային հարթավայրում:

Երևակման հարակից շրջանի երկրաբանական կառուցվածքի և օգտակար հանածոների հանքավայրերի ուսումնասիրությամբ տարբեր տարիներին զբաղվել են Կ.Ն.Պաֆենհոլցը, Ա.Տ.Ասլանյանը, Ա.Տ.Վեհունին, Ռ.Ա.Առաքելյանը,

Ռ.Կ.Խաչատրյանը, Հ.Հ.Գաբրիելյանը, Վ.Ամարյանը, ԷՇԽարազյանը, Ա.Ս.Գրիգորյանը
և ուրիշները:

Ուսումնասիրվող Երևական հարակից շրջանի երկրաբանական կառուցվածքը, ներկայիս պատկերացմամբ, արտացոլված է Վ.Ամարյանի և Է. Խարազյանի պետական հանույթի 1:50000 մասշտաբի երկրաբանական քարտեզում (Նկ. 3), , ըստ որի տարածքն ամբողջությամբ ծածկված է պլիոցեն-չորրորդականի և ժամանակակից հրաբխածին ապարներով, լճային, լճագետային նստվածքներով և, մասամբ, ալյուվիալ-պրոլյուվիալ և ճահճային առաջացումներով:

Շրջանի երկրաբանական կտրվածքի հիմքի ծալքավոր կոմպլեքսի ապարներից միայն միոցենի ապարներն են մերկանում ոչ մեծ տարածքում, շրջանի հյուսիս-արևելյան մասում՝ բերված քարտեզի սահմաններից դուրս: Ներկայացված են դրանք Հացավանի (կարմրավուն ավազաքարեր, կավեր, կոնգլոմերատներ), Ջրվեժի (աղաբեր և գիպսա-տար ապարներ) և Հրազդանի (կրային կավեր, ավազաքարեր, գլաքարեր) շերտա-խմբերով:

Միոցենի նստվածքների տակ տարբեր խորությունների վրա քարտեզագրական հորատանցերով կտրվել են օլիգոցենի, միջին-վերին էոցենի, կավճի ապարները, իսկ Արարատյան իջվածքի հարևան տարածքներում նաև պրոտերոզոյ-ստորին պալեոզոյան հասակի մետամորֆային հիմքի ապարները:

Արարատյան իջվածքի ոչ դիալոկացված ծածկոցը կազմում են վերին պլիոցենի դոլերիտային բազալտները և չորրորդականի անդեզիտաբազալտային ծածկույթները, բաղկացած առանձին հոսքերից, որոնք միմյանցից անջատվում են կավերի, ավազա-կավերի, կոպիճների և մանրազլաքարերի հերթափոխվող շերտերով:

Նկարագրվող կտրվածքը եզրափակվում է դիտարկվող տարածաշրջանում լայնորեն տարածում գտած վերին չորրորդականի Արարատյան դաշտավայրի ստորին դարավանդի ալյուվիալ-լճային առաջացումներով ու ժամանակակից ալյուվիալ-պրոլյուվիալ և դելյուվիալ նստվածքներով:

Արարատյան ռավորության ընդհանուր իջեցման հետևանքով կուտակվել են կոպճի, ավազի և կավի հզոր նստվածքներ: Արարատյան իջվածքում միոցեն-պլիոցեն և հոլոցենը ներկայացված են մինչև 500 մ հզորությամբ լճագետային նստվածքներով և, մասամբ, հրաբխածին ապարներով, իսկ Արաքս և Հրազդան գետերի լճա-ալյուվիալ

նստվածքների հզորությունը հասնում է մինչև 70 մ, ինչը վկայում է դրանց ինտենսիվ ակումուլյատիվ-էրոզիոն գործունեության մասին: Երևակման շրջանում Արաքս և Հրազդան գետերի և դրանց վտակների դիրքը հաճախ չի համընկնում ժամանակակից հունին և տեղաշարժված են դրանց նկատմամբ 2-ից մինչև 10 կմ չափով: Տեղաշարժման այդպիսի ամպլիտուդան վկայում է գետերի ինտենսիվ մեանդրագենեզի և փուխր բեկորային առաջացումների լայն զարգացման մասին:

Տարածաշրջանի երկրաբանակառուցվածքային առանձնահատկությունների հետ կապված այն հարուստ է ոչ մետաղային օգտակար հանածոներով: Մանրագնին հե-տա-խուզ-վել են Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրը՝ որպես ցեմենտի հումք և դրա տեղամասերը (Գոռավան, Արևմտյան, Նյուլիթա-4, Կեռասի, Վանաշենի և այլն)՝ երեսապատման և շինարարական քարերի; Արտավազդի տրավերտինների, Մարմարասարի մարմարների, Ուրցասարի և Շաղափի կրաքարերի, Արարատի և Խոր-վիրապի մարմարների, Արարատի քվարցիտների և այլ հանքավայրեր: Վերոհիշյալ հանքավայրերի զգալի մասի հետ ներկայումս շահաօրծվում են նաև տրավերտինների, օրգանածին կրաքարերի և ավա-զակոպճային խառնուրդների մի շարք հանքավայրեր ու տեղամասեր (Գոռավան, Մուլտի-Գրուպ Սթոուն, Արտավազդ, և այլն):

Ուսումնասիրվելիք Միս 1221՝ ավազի երևակման ամբողջ տարածքը զբաղեցնում են Արարատյան դաշտավայրի ստորին լճային դարավանդի (վերին չորրորդական հասակի) նստվածքները: Վերջինիս աստիճանները մասամբ հղկված են և առաջացնում են դեպի Արաքսի գետահունը մեղմ թեքության հարթավայր: Երևակումը, բացառությամբ հարավ-արևելյան մասից եզրագծվում է ոռոգման ներքին ցանցի ջրատարներով, որոնց ափերի երկայնքով գոյություն ունի պաշտպանիչ գրունտային պատվար:

Ըստ ֆոնդային նյութերի վերհունային դրավանդները երևակման հարակից տարածքներում ներկայացված են հիմնականում ալյուվիալ-լճային փուխր բեկորային առաջացումներից, կազմված կոպիճներով, ավազներով ու դրանց խառնուրդներով, որոնց մեջ գերակշռում են մանրակոպճային տարահատիկ (հիմնականում միջին խոշորության) ավազները: Նստվածքները երբեմն ներփակում են տիղմակավային մանր ենթաշերտեր և մանրակոպճի ոսպնյակներ:

Հարևանությամբ գտնվող ձկնաբուծարանի տարածքում կատարված հորատման տվյալների համաձայն, ակնկալվում է, որ երևակման կոպճաավազային նստվածքների հզորությունը կազմելու է մոտ 4-5 մ:

Ավազակուտակը հիմնատակվում է կավաավազների ու կավերի շերտով:

Ծածկող մակաբացման ապարները ներկայացված են մասամբ ադակաված բարակ հողաբուսական տիղմակավային շերտով և մինչև 3.0 մ հզորության կավավազային ժամանակակից նստվածքներով:

Երևակման տարածքում նախկինում երկրաբանահետախուզական աշխատանքներ չեն կատարվել:

Համաձայն ՀՀ ՏԿԵ նախարարի 2021թ. օգոստոսի 11-ի թիվ 06-Ն հրամանով ամրագրված «Ավազի և ավազակոպճային խառնուրդի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգի» ցուցումների, տեղամասը երկրաբանական կառուցվածքի բարդությամբ դասվում է ավազի և ավազակոպճային խառնուրդի հանքավայրերի 1-ին խմբին:

▪ **Նախատեսվող գործունեության բնութագիրը**

Երկրաբանահետախուզական աշխատանքների ծրագիրը կազմված է նկատի ունենալով երևակման պարզ երկրաբանական կառուցվածքը (1-ին խումբ), չափսերը, տեղանքի հարթ ռելիեֆը, օգտակար հանածոյի շերտաձև մարմնի մեծ հզորությունը, ինչպես նաև Ավազի և կոպիճի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգի՝ հանձնարարականները:

Վերոհիշյալի հաշվառմամբ որպես հետախուզամիջոց է ընտրվել սյունակային հորատման մինչև 8 մ խորությամբ հորատանցքերը: Հետախուզվող սահմանափակ տարածքի պարագայում, հետախուզական փորվածքները նախատեսվում է հնարավորինս տեղադրել հետկացված տարածքի եզրակետերում՝ հետախուզական ցանցի հետագա խտացումով ապահովել տեղամասի նախանշված հետախուզվածության աստիճանը, միաժամանակ հարևանությամբ անցնող ոռոգման ջրատարներից թողնելով 5 մ պահպանիչ գոտի:

Ելնելով տեղամասի չափերից աշխատանքները կիրականացվեն 16 ուղղաձիգ հորատանցքերով, որոնցով կհատվի, կուսումնասիրվի և կնմուշարկվի

ավագակուտակը ամբողջ հզորությամբ:

Տեղամասում ձևավորված հետախուզական ցանցի խտությունը՝ հորատանցքերի միջև 120-190 մ թույլ կտա տալ օգտակար հանածոյի որակական և քանակական գնահատականը, իսկ հետախուզած պաշարները շգնահատել արդյունաբերական A կարգով: Մինչև նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմելը, անհրաժեշտ է ծանոթանալ ֆոնդային և հրատարակված նյութերին, ինչպես նաև գործող հրահանգներին և ԳՕՍՏ-երին:

Երկրաբանահանույթային աշխատանքներն իրականացվելու են 20 հատարածքում տեղամասի (հանքավայրի) 1:2000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման նպատակով: Այն նախատեսվում է կատարել նույն մասշտաբի տոպոգրաֆիական հիմքի վրա:

Օգտակար հանածոյի մարմնի եզրագծման, ըստ խորության ուսումնասիրման ու նմուշարկման համար նախատեսվում է կատարել մեխանիկական պունակային հորատում:

Հորատումը կիրականացվի ՄՊԵ-50 հորատման հաստոցով՝ առաջընթաց ամրակապման եղանակով, 112 մմ և 93 մմ տրամագծերի հորատման թագիկներով, որը պետք է ապահովի 80%-ից ոչ պակաս հորատահանուկի ելք: Հորատումը իրականացվելու է 90° անկյան տակ, առանց հորատման լուծույթի օգտագործման՝ օգտակար հաստվածքը ջրակալված է: Նախատեսվում է հորատել մինչև 8մ խորության 16 հորատանցքեր (մինչև հիմնատակող կավերի շերտը), 128 գծ.մ ընդհանուր խորությամբ: Յուրաքանչյուր հորատանցքից հանվելու է մոտ 20-25կգ ավազ, ընդամենը մոտ 16x25=400կգ:

Հորատման աշխատանքները կիրականացվեն մասնավոր կազմակերպության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Հորատման հրապարակների կառուցում չի նախատեսվում՝ երևակման ռեփեֆը հարթ է:

Տեղամասին մոտեցող ավտոճանապարհները բարենպաստ են, ուստի ճանապարհների նորոգում և կառուցում չի նախատեսվում:

Մանրամասն երկրաբանական փաստագրման են ենթակա բոլոր հորատանցքերը, ընդհանուր 128մ երկարությամբ: Երկրաբանական փաստագրման աշխատանքներ նախատեսվում է կատարել 1: 100 մասշտաբով:

Օգտակար հանածոյի նմուշարկումը նախատեսվում է դրա հատիկային կազմի և որակական հատկանիշների պարզաբանելու համար:

Ֆիզիկամեխանիկական ուսումնասիրությունների նպատակով հորատանցքերից նախատեսվում է վերցնել 16 հանուկային նմուշ /մեկական յուրաքանչյուր փորվածքից/: Նմուշները նախատեսվում է վերցնել օգտակար հաստվածքի ամբողջ հզորությամբ /ավազակուտակի հզորությունը ակնկալվում է 4-5 մ/:

Դրանցից 3 նմուշ կենթարկվի նաև քիմիական անալիզի և 3 նմուշ միներալային կազմի ուսումնասիրությունների:

Լաբորատոր հետազոտությունները կիրականացվեն 'Անալիտիկ' ՓԲ ընկերության լաբորատորիայում, պայմանագրային հիմունքներով:

Տեղամասում նախատեսվում է կատարել 1:2000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ 20.0 հա տարածքի վրա բոլոր փորվածքների գործիքային տեղադրմամբ տոպոհիմքի վրա, որի հենքի վրա կկազմվի հանքավայրի նույն մասշտաբի երկրաբանական քարտեզ:

Ավազի ծավալային զանգվածը բնամասում նախատեսվում է որոշել երևակման տարբեր մասերում՝ ավազակուտակի մերկացած 3 փորձարկման կետերում: Այն կիրականացվի դաշտային պայմաններում, հայտնի ծավալից հանված ապարի կշռման եղանակով, որի ընթացքում կորոշվի նաև ավազահումքի փխրեցման գործակիցը: Չափագրումից ու հանված ապարի կշռումից հետո այն կենթարկվի հետլցմանման: Այս աշխատանքները նախատեսվում է իրականացնել ձեռքով՝ հանվածքի չափագրման հավաստիությունը ապահովելու նպատակով:

Հանքավայրի ջրաերկրաբանական և ինժեներաերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով դաշտային աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել համապատասխան դիտարկումներ: Յուրաքանչյուր հորատանցքում

նախատեսվում է ֆիքսել գետնաշրերի հայելու խորությունը:

Օգտակար հանածոյի ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար տեղամասի տարածքում նախատեսվում է կատարել սքրինինգային ճառագայթային մոնիթորինգային աշխատանքներ, որոնց հիման վրա կտրվի դրա ճառագայթահիգիենիկ գնահատականը:

Աշխատանքները կկտարվեն պայմանագրային հիմունքներով մասնագիտացված կազմակերպության կողմից:

Նախատեսված երկրաբանահետաուզական աշխատանքների և օգտակար հանածոյի լաբորատոր ուսումնասիրությունների ավարտից հետո (դրական արդյունքների դեպքում), նախատեսվում են աշխատանոցային աշխատանքներ, որի ընթացքում.

- կամփոփվեն և կհամակարգվեն դաշտային փաստացի երկրաբանական նյութերը, լաբորատոր ուսումնասիրությունների արդյունքները,
- կտրվի հանքավայրի 1:2000 մասշտաբի երկրաբանական քարտեզը,
- կկատարվի օգտակար հանածոյի պաշարների եզրագծում և հաշվարկը,
- կկազմվի հանքավայրի երկրաբանատնտեսագիտական գնահատականը ,
- կկազմվի հանքավայրի երկրաբանատնտեսագիտական գնահատմամբ և պաշարների հաշվարկմամբ երկրաբանական հաշվետվություն:

Բեռների, նմուշների և անձնակազմի փոխադրումը նախատեսվում է իրականացնել մարդատար ավտոմեքենաներով՝ I և III կարգի ավտոճանապարհներով:

Տրանսպորտային ծախսերի արժեքը հաշվարկվում է դաշտային աշխատանքների և ժամանակավոր կառույցների արժեքների 10 %-ի չափով:

ՄԻՍ 1221՝ ավազի երևակումում 2023-2024թթ. ծրագրված երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքներով կտրվի հանքավայրի երկրաբանատնտեսական գնահատականը, կկատարվի պաշարների հաշվարկ արդյունաբերական A կարգով: Պաշարների հաշվարկման և տեխնիկատնտեսական հիմնավորման նյութերով նախատեսվում է կազմել երկրաբանական հաշվետվություն, որը

կներկայացվի ՀՀ ՏԿԵՆ Ընդերքի վարչություն՝ պետական ընդերքաբանական փորձաքննության:

Նախատեսվող աշխատանքների ծավալները

Հ/	Աշխատանքերի բնույթը	Չափմա միավոր	Ծավալը
1	Տոպոհանույթ՝ 1:2000 մասշտաբի	հա	20
2	Երկրաբանական քարտեզագրում	հա	20
3	Հորատանցքերի հորատում	մ	128
4	Հորատանցքերի փաստագրում	մ	128
5	Բնամասում ավազի ծավալային զանգվածի դաշտային որոշում	հատ	3
6	Նմուշարկում և լաբորատոր հետազոտություններ		
	Ֆիզ.մեխ.փորձարկումներ լրիվ ցիկլով	նմուշ	16
	Քիմիական անալիզներ	նմուշ	3
	Միներալոգիական ուսումնասիրություններ	նմուշ	3
7	Հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական դիտարկումներ	-	+
8	Ճառագայթահիգիենիկ իրավիճակի գնահատում	-	+
9	Հանքավայրի արդյունաբերական գնահատում	-	+
10	Պաշարների հաշվարկով հաշտվության կազմում և ձևավորում	-	+

▪ **Նախագծման նորմատիվ-իրավական հենքը**

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

– ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման

անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

– ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

– ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

– «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

– «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

– «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), **«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-522-Ն** (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ **ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը**: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

– «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211,

27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

– «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

– ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշում, որով հաստատվել է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը:

– ՀՀ կառավարության 18.08.2021թ.-ի N1352-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված ռեկուլտիվացիոն աշխատանքների՝ նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:

– ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:

- ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները
- ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:
- ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը :
- ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի: ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը:
- ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը:
- ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ.-ի N138 հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում աղմուկի սանիտարական նորմերը:
- ՀՀ առողջապահության նախարարի 17.05.2006թ.-ի N533-Ն հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման հիգիենիկ նորմերը:
- ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշում, որով հաստատվել է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը:
- ՀՀ կառավարության 18.08.2021թ.-ի N1352-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով

սահմանված շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված ռեկուլտիվացիոն աշխատանքների՝ նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:

– ՀՀ բնապահպանության նախարարի 26.10.2006թ.-ի N342-Ն որոշում, որով հաստատվել է Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը:

– ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշում, որով հաստատվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլանների օրինակելի ձևերը:

– ՀՀ կառավարության 20.01.2005թ. «Զրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» 64-Ն որոշումով:

- 25.10.2022թ.-ի ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 369-Ն հրամանը,

- «Թափոնների մասին» ՀՀ օրենք (24.11.2004թ):

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

▪ Գտնվելու վայրը

Հետախուզվող երևակման տեղամասը վարչատնտեսական առումով գտնվում է ՀՀ Արարատի մարզի Սիս գյուղից 1.2 կմ հարավ և զբաղեցնում է 20.0 հա տարածք Հրազդան գետի աջափնյա մասում, գետից մոտ 1.0 կմ հեռավորության վրա: Մե ջուր գետից հայցվող տարածքի հեռավորությունը կազմում է 2,2կմ, Քասախ գետից՝2,5կմ, Հրազդան գետից՝0,8կմ, այլ ջրային ռեսուրս մոտակայքում /2,5կմ տարածքով/ չկա, Մե ջրի վտակ մոտակայքում առկա չէ: Մոտակա բնակելի տունը հայցվող տարածքից գտնվում է մոտ 0,6կմ, ավտոմայրուղին մոտ 1,2կմ, ձկնաբուծարան առկա է 2 հատ, մեկից մոտ 0,5կմ, մյուսից մոտ 0,6կմ հեռավորության վրա:

Նշված տեղամասում նախկինում հողային կամ որևէ այլ աշխատանքներ չեն իրականացվել:

Հայցվող տեղամասի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են.

- հյուսիսային լայնությունը՝ 40° 2՝ 41.20``

- արևելյան երկայնությունը՝ 44° 23՝ 20.23``

Երևակման հայցվող տարածքի ծայրակետերի կոորդինատներն են

WGS-84 (ARMREF 02) կոորդինատային համակարգով (Նկ. 1 ; 2):

1.	X- 4434907	Y - 8447419	4.	X- 4434711	Y - 8448147
2.	X- 4434997	Y - 8447707	5.	X- 4434442	Y - 8448013
3.	X- 4434774	Y - 8448246			

Երևակումը գտնվում է 824-826 մ բացարձակ բարձրությունների վրա:

Հետախուզվող տեղամասը Երևանի հետ կապված է (20 կմ) ավտոմայրուղով:

Մոտակա բնակավայրերն են Մասիս քաղաքը, Ռանչպար, Նորամարգ և Սիս գյուղերը (Նկ. 1): Վերջինս երևակման հետ կապված է 1.2 կմ գրունտային ավտոճանապարհով, որը բարեկարգման կարիք չունի:

Երևակման տարածքում նախկինում երկրաբանահետախուզական աշխատանքներ չեն կատարվել:

Արարատի մարզը հանդիսանում է հանրապետության խոշոր գյուղատնտեսական

կենտրոններից մեկը, որտեղ զարգացած է խաղողագործությունը, բանջարաբուստանային և հացահատիկային կուլտուրաների արտադրությունը:

Արդյունաբերական խոշոր ձեռնարկություններից են Արարատի տրավերտինների և կավի հանքավայրերի հենքի վրա աշխատող համանուն ցեմենտ-շիֆերի գործարանը և Արարատի ոսկու հարստատուցիչ ֆաբրիկան: Գործում են մի շարք գյուղմթերքների մշակման (գինու, կոնյակի և պահածոների) և լեռնաարդյունաբերական ոչ մեծ ձեռնարկություններ, որոնք զբաղվում են առկա բնական բարձրորակ շինանյութերի հանքավայրերի շահագործման և արդյունահանված հումքի մշակմամբ: Գործում են նաև մի քանի քարամշակման արտադրամասեր: Ներկայումս շահագործվում են նաև տրավերտինների, կրաքարերի և շինարարական ավազների մի շարք հանքավայրեր (Գոռավանի, Արտավազի, Շաղափի, Արաքսավանի, Գայի և այլն):

Մորֆոլոգիական տեսակետից երևակման տարածքը գտնվում է Արարատյան դաշտավայրի կենտրոնական մասի հարթավայրային գոտում:

Գետային ցանցի հիմնական զարկերակներից են Հրազդանը և Սևջուրը, որոնց ջրերը օգտագործվում են առավելապես ոռոգման նպատակով:

Հրազդան գետը հանրապետության խոշոր գետերից է, սկիզբ է առնում Սևանա լճից: Գետի երկարությունը 141կմ է, խոշոր վտակը Մարմարիկն է: Բնական հոսքը Արարատյան դաշտում 23.0 մ³/վրկ: Գետի վրա կառուցվել են էլեկտրոկայանների կասկադ (Սևանի, Աթարբեկյանի, Երևանի) և ոռոգիչ ջրանցքների բարդ համակարգ, Հրազդանի և Երևանյան ջրամ-բարները: Հրազդանի միջին տարեկան հոսքը՝ 714 մլն.մ³, ծավալը՝ 22.6 մ³ /վրկ: Գետի ջրերը մետաղի և բետոնի նկատմամբ ագրեսիվ չեն:

Խմելու ջրով շրջանը ապահովված է բավարար չափով:

Վառելիքահումքային և անտառանյութի պահանջները բավարարվում են ներմուծման հաշվին: Տարածաշրջանն էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված է, զարգացած է ճանապարհային ցանցը:

Շրջանի կլիման չոր է և խիստ ցամաքային (ամռանը +35-+46⁰, իսկ ձմռանը -15 -20⁰): Տարեկան միջին ջերմաստիճանը+16⁰ °C: Մթնոլորտային տեղումների քանակը չի գերազանցում 300մմ: Անսառնամանիք օրերի թիվը 150-200 օր:


Շրջանը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում: Այն վերահսկվում է Երևան-Օրդու-բաղի վերնետք/կողաշարժ բնույթի սեյսմածին խորքային բեկվածքով, որտեղ հնարավոր են բարձր մագնիտուդի երկրաշարժեր: ՀՀՇՆ 20.04.2020-ի (Երկրաշարժադինացկուն շինարարություն) համաձայն երևակման տարածաշրջանը ընդգրկվում է 1-ին սեյսմիկ գոտում, որտեղ սեյսմիկությունը՝ արտահայտված գրունտի հորիզոնական արագացմամբ, կազմում է 0.3 g:

Շրջանում առկա է աշխատուժի ավելցուկ:



Նկար 1. Հայցվող տարածքի տեղադիրքի իրավիճակային հատակագիծ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ARARAT MARZ



Մարզկենտրոնը ԱՐՏԱՇԱՏ
4 բաղաբ. 94 բնակավայր
Մարզային նշանակության
ճանապարհների
երկարությունը՝ 405կմ

ARTASHAT the center
4 cities 94 settlements
Instate roads 405 km




Իրավիճակային հատակագիծ՝ հայցվող տեղամասի հեռավորությունը մոտակա համայնքներից

Տեղամասը գտնվում է .


Միս գյուղից 1,2կմ հարավ,

Ռանչպար գյուղից 2,3 կմ հյուսիս-արևելք,

Նորամարգ գյուղից 3,2կմ հյուսիս-արևմուտք:



Составлено на 1978 г. материалы № 239 (0-27). Данные
объемные топографические материалы 0-27 (0-28) При
составлении (0-28) (0-29) и картографические данные
составлены (0-28) (0-29) (0-30) (0-31) (0-32) (0-33)
на основании 0-27 (0-28) (0-29) (0-30) (0-31) (0-32)
при переносе и редактировании данных. Масштаб
0-27 (0-28) (0-29) (0-30) (0-31) (0-32) (0-33)
0-27 (0-28) (0-29) (0-30) (0-31) (0-32) (0-33)
0-27 (0-28) (0-29) (0-30) (0-31) (0-32) (0-33)



- 1 Составлено по топографическим сведениям 1940 г.
Обновлено в 1977 г.
 - 2 Система ВРС-1971
Исправлено по материалам на 1969 г.
- Иллюстрации составлены В.П. Мушкетером
и подписаны Г.А. Сидоровым

1
2
3
ОТН
3

- **Ռելիեֆ, երկրաձևաբանություն, սելյամիկ բնութագիր, սողանքներ**

Ռեսուրսասիրվող «ՍԻՍ 1221» ավազի երևակունը գտնվում է Սևջուր և Հրազդան գետերի միջև, դրանց ու Արաքս գետի մեանդրման արդյունքում ձևավորված Արարատյան իջվածքի ակունույատիվ լճադարավանդային հարթավայրում:

Երևակման հարակից շրջանի երկրաբանական կառուցվածքի և օգտակար հանածոների հանքավայրերի ուսումնասիրությամբ տարբեր տարիներին զբաղվել են Կ.Ն.Պաֆենհոլցը, Ա.Տ.Ասլանյանը, Ա.Տ.Վեհունին, Ռ.Ա.Առաքելյանը, Ռ.Կ.Խաչատրյանը, Հ.Հ.Գաբրիելյանը, Վ.Ամարյանը, Է.Խարազյանը, Ա.Ս.Գրիգորյանը և ուրիշները:

Ուսումնասիրվող Երևակման հարակից շրջանի երկրաբանական կառուցվածքը, ներկայիս պատկերացմամբ, արտացոլված է Վ.Ամարյանի և Է.Խարազյանի պետական հանույթի 1:50000 մասշտաբի երկրաբանական քարտեզում (Նկ. 3), , ըստ որի տարածքն ամբողջությամբ ծածկված է պլիոցեն-չորրորդականի և ժամանակակից հրաբխածին ապարներով, լճային, լճագետային նստվածքներով և, մասամբ, այլուվիալ-պրոլյուվիալ և ճահճային առաջացումներով:

Շրջանի երկրաբանական կտրվածքի հիմքի ծալքավոր կոնպլեքսի ապարներից միայն միոցենի ապարներն են մերկանում ոչ մեծ տարածքում, շրջանի հյուսիս-արևելյան մասում` բերված քարտեզի սահմաններից դուրս: Ներկայացված են դրանք Հացավանի (կարմրավուն ավազաքարեր, կավեր, կոնգլոմերատներ), Ջրվեժի (աղաբեր և գիպսա-տար ապարներ) և Հրազդանի (կրային կավեր, ավազաքարեր, գլաքարեր) շերտա-խմբերով:

Միոցենի նստվածքների տակ տարբեր խորությունների վրա քարտեզագրական հորատանցերով կտրվել են օլիգոցենի, միջին-վերին էոցենի, կավձի ապարները, իսկ Արարատյան իջվածքի հարևան տարածքներում նաև պրոտերոզոյ-ստորին պալեոզոյան հասակի մետամորֆային հիմքի ապարները:

Արարատյան իջվածքի ոչ դիսլոկացված ծածկոցը կազմում են վերին պլիոցենի դոլերիտային բազալտները և չորրորդականի անդեզիտաբազալտային ծածկույթները, բաղկացած առանձին հոսքերից, որոնք միմյանցից անջատվում են կավերի, ավազա-կավերի, կոպիճների և մանրազլաքարերի հերթափոխվող շերտերով:

Նկարագրվող կտրվածքը եզրափակվում է դիտարկվող տարածաշրջանում լայնորեն տարածում գտած վերին չորրորդականի Արարատյան դաշտավայրի ստորին դա-

րավանդի այլուվիալ-լճային առաջացումներով ու ժամանակակից այլուվիալ-պրոյուվիալ և դեյուվիալ նստվածքներով:

Արարատյան գոգավորության ընդհանուր իջեցման հետևանքով կուտակվել են կոպձի, ավազի և կավի հզոր նստվածքներ: Արարատյան իջվածքում միոցեն-պլիոցեն և հոլոցենը ներկայացված են մինչև 500 մ հզորությամբ լճագետային նստվածքներով և, մասամբ, հրաբխածին ապարներով, իսկ Արաքս և Հրազդան գետերի լճա-այլուվիալ նստվածքների հզորությունը հասնում է մինչև 70 մ, ինչը վկայում է դրանց ինտենսիվ ակումու-

յատիվ-էրոզիոն գործունեության մասին: Երևակման շրջանում Արաքս և Հրազդան գետերի և դրանց վտակների դիրքը հաճախ չի համընկնում ժամանակակից հունին և տեղաշարժված են դրանց նկատմամբ 2-ից մինչև 10 կմ չափով: Տեղաշարժման այդպիսի ամպլիտուդան վկայում է գետերի ինտենսիվ մեանդրագեներեզի և փոխար քեկորային առաջացումների լայն զարգացման մասին:

Տարածաշրջանի երկրաբանակառուցվածքային առանձնահատկությունների հետ կապված այն հարուստ է ոչ մետաղային օգտակար հանածոներով: Մանրագնին հետախուզվել են Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրը՝ որպես ցեմենտի հումք և դրա տեղամասերը (Գոռավան, Արևմտյան, Նյուլիթա-4, Կեռասի, Վանաշենի և այլն)՝ երեսապատման և շինարարական քարերի; Արտավազի տրավերտինների, Մարմարասարի մարմարների, Ուրցասարի և Շաղափի կրաքարերի, Արարատի և Խոր-վիրապի մարմարների, Արարատի քվարցիտների և այլ հանքավայրեր: Վերոհիշյալ հանքավայրերի զգալի մասի հետ ներկայումս շահագործվում են նաև տրավերտինների, օրգանածին կրաքարերի և ավազակոպձային խառնուրդների մի շարք հանքավայրեր ու տեղամասեր (Գոռավան, «Մուլտի-Գրուպ Սթոուն», Արտավազ, և այլն):

Ուսումնասիրվելիք «Միս 1221» ավազի երևակման ամբողջ տարածքը զբաղեցնում են Արարատյան դաշտավայրի ստորին լճային դարավանդի (վերին չորրորդական հասակի) նստվածքները: Վերջինիս աստիճանները մասամբ հղկված են և առաջացնում են դեպի Արաքսի գետահունը մեղմ թեքության հարթավայր: Երևակումը, բացառությամբ հարավ-արևելյան մասից եզրզգծվում է ոռոգման ներքին ցանցի ջրատարներով, որոնց ավերի երկայնքով գոյություն ունի պաշտպանիչ գրունտային պատվար (Գծ. հավելված 1):

Ըստ ֆոնդային նյութերի վերհունային դրավանդները երևակման հարակից տարածքներում ներկայացված են հիմնականում այլուվիալ-լճային փոխար քեկորային առաջացումներից, կազմված կոպիձներով, ավազներով ու դրանց խառնուրդներով, որոնց մեջ գերակշռում են մանրակոպձային տարահատիկ (հիմնականում միջին խոշորության)

ավազները: Նստվածքները երբեմն ներփակում են տիղմակավային մանր ենթաշերտեր և մանրակոպձի ոսպնյակներ:

Հարևանությամբ գտնվող ձկնաբուծարանի տարածքում կատարված հորատման տվյալների համաձայն, ակնկալվում է, որ երևակման կոպձաավազային նստվածքների հզորությունը կազմելու է մոտ 4-5 մ:


Ավազակուտակը հիմնատակվում է կավաավազների ու կավերի շերտով:

Ծածկող մակաբացման ապարները ներկայացված են մասամբ աղակալված բարակ հողաբուսական տիղմակավային շերտով և մինչև 3.0 մ հզորության կավավազային ժամանակակից նստվածքներով:

Երևակման տարածքում նախկինում երկրաբանահետախուզական աշխատանքներ չեն կատարվել:

Հետախուզվող երևակման օգտակար հանածոյի մարմինը իրենից ներկայացնում է հորիզոնականին մոտ տեղադրված շերտաձև կուտակ, որը համաձայն «Ավազի և կոպձի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման» հրահանգի վերագրվում է 1-ին խմբին:

ՇՐՋԱՆԻ ԵԿՐԱԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՆԵՐԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

1 - Ցածր /700-1100մ/ ենթահորիզոնական մասամբ
 դարավանդավորված ներլեռնային հարթավայրեր

Նկար 3.


ՇՐՋԱՆԻ ԼԱՆՁԵՐԻ ԹԵՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

1 - Հարթավայրեր՝ 0-4 աստիճան թերությամբ

Նկար 4.



Նկար 5.

▪ Շրջանը ներառված է մեկ՝ չոր ցամաքային կլիմայական գոտում (նկար 8), ցուրտ ձմեռով և շոգ ամառով (ամռանը մինչև +40°C, իսկ ձմռանը՝ -10°C):

Շրջանի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է +6°C-ից +12°C: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի գերազանցում 300մմ: Տեղումների առավելագույն քանակը 37մմ է (հունիս ամսին): Տասնօրյա առավելագույն ձյան ծածկույթը կազմում է 35մմ: Անսառնամանիք օրերի թիվը՝ 150-200օր: Կայուն ձյան ծածկույթը գոյանում է դեկտեմբերի 15-ից և պահպանվում է մինչև մարտի 15-ը: Քամիների հիմնական ուղղություններն են հյուսիս, հարավ-արևելք և հյուսիս-արևմուտք: Անհողմությունները կազմում են 29%:

Ստորև 2-8 աղյուսակներում ամփոփված է տեղեկատվություն օդի ջերմաստիճանը, քամիների, տեղումների վերաբերյալ (ըստ մոտակա Արտաշատ և Երևան «Էրեբունի» օդերևութաբանական կայանների տվյալների):

Աղյուսակ 2.

Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %


I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Արտաշատ կայան											
78	73	63	58	59	54	51	52	57	68	73	79
Երևան «Էրեբունի» կայան											
79	75	62	56	57	49	45	46	49	62	73	79

Աղյուսակ 3.

Օդի ամսեկան և տարեկան ջերմաստիճանները

Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
Արտաշատ կայան														
-3.6	-0.9	5.6	12.7	17.5	21.5	25.3	24.8	19.8	13.0	6.0	-0.6	11.8	-29	43
Երևան «Էրեբունի» կայան														
-3.6	-1.0	5.3	12.5	17.4	21.8	25.8	52.2	20.50	13.3	6.3	-0.2	11.9	-28	42

ՇՐՋԱՆԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

1 - Չոր ցամաքային կլիմայական գոտի

Նկար 6.

Տեղամների քանակը ըստ ամիսների, մմ

Տեղամների քանակը միջին ամսական/օրական առավելագույն, մմ												
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	միջին
Արտաշատ կայան												
18	18	27	36	40	25	11	6	10	22	24	17	254
18	20	32	36	43	34	27	22	28	36	31	25	43
Երևան «Էրեբունի» կայան												
24	23	32	35	45	23	11	8	12	29	28	21	291
24	23	34	29	42	34	29	37	51	35	36	28	51

Չնաձածկույթը

Չնաձածկույթը		
Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնաձածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
Արտաշատ կայան		
40	35	46
Երևան «Էրեբունի» կայան		
58	47	-

Քամիներ

Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, հՊա	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ								Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով օրերի քանակը, օր
		Ուղղությունները										
		Հս	Հս-Արլ	Արլ	Հվ-Արլ	Հվ	Հվ-Արմ	Արմ	Հս-Արմ			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Արտաշատ կայան												
920.2	հունվար	7	8	10	20	12	10	15	18	88	0.4	7
		1.7	1.7	2.7	3.1	2.4	2.0	2.2	1.74			
	ապրիլ	4	9	12	27	13	8	13	15	74		
		1.7	1.8	2.1	2.8	2.5	2.8	2.8	2.6			
	հուլիս	8	7	9	16	9	9	18	24	80		
		1.7	1.9	1.7	2.0	2.0	2.0	2.7	2.3			
	հոկտեմբեր	7	12	12	19	8	10	16	16	85		
		1.6	1.5	2.1	2.0	1.5	2.1	2.4	2.0			

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Երևան «Էրեբունի» կայան												
912.1	հունվար	4	9	11	14	21	25	12	4	76	0.7	1.5
		2.2	2.2	2.2	2.9	2.7	2.3	2.6	2.7			
	ապրիլ	7	14	8	16	20	16	13	6	45	1.9	
		3.1	3.2	2.8	4.0	3.1	3.0	3.8	3.6			
	հուլիս	17	28	4	9	17	13	8	4	36	2.8	
		5.2	5.7	2.8	2.7	2.4	2.7	2.9	4.3			
	հոկտեմբեր	6	18	10	10	21	20	10	5	63	1.0	
		2.9	2.5	2.1	2.5	2.3	2.4	2.9	3.5			

Աղյուսակ 7.

Արևափայլի տևողությունը, ժամ

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Արտաշատ կայան											
87	108	167	186	251	305	341	319	276	204	138	89

Աղյուսակ 8.

Անարև օրերի քանակը, օր

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Արտաշատ կայան											
11	7	5	3	0.9	0.2	-	0.1	0.2	1	5	10

▪ Մթնոլորտային օդ

Երևակման տարածքում շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի համակարգում ներառված մթնոլորտային օդի մոնիտորինգի դիտակայան չկա:

2022 թվականի փետրվարին կատարվել է երևակման տարածքի մթնոլորտային օդի դիտարկում, որի արդյունքում արձանագրվել են հետևյալ ցուցանիշները. փոշի 0.078մգ/մ³, ծծմբի երկօքսիդ 0.0098մգ/մ³, ազոտի երկօքսիդ 0.0032մգ/մ³ և ածխածնի օքսիդ 0.11մգ/մ³:

Որոշակի պատկերացում տարածքի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ նաև հաշվարկային եղանակով: Դրա համար ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» (ներկայումս՝ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն») ՊՈԱԿ կողմից մշակվել է ուղեցույց ձեռնարկ, ուր ներկայացված են

մթնուլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից:

Աղյուսակ 9.

Բնակչության քանակը (հազ.)	Որոշված նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 - 125	0,4	0,05	0,03	1,5
10 - 50	0,3	0,05	0,015	0,8
< 10	0,2	0,02	0,008	0,4

Տեղամասի տարածքին մոտ գտնվող բնակավայրերում մշտական բնակչությունը ըստ պաշտոնական տվյալների չի գերազանցում 10000 մարդ: Հետևաբար, տեղամասի տարածքի համար որպես մթնուլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցամիջ պետք է ընդունել. փոշի 0.2մգ/մ³, ծծմբի երկօքսիդ 0.02 մգ/մ³, ազոտի երկօքսիդ 0.008մգ/մ³ և ածխածնի օքսիդ 0.4մգ/մ³:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բնապահպանական միջոցառումների կառավարման պլանը կազմելիս որպես սահմանանիշ կարող են ընդունվել նաև ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն հրամանի հավելված 1-ով ամրագրված նորմատիվները:

Ըստ նշված փաստաթղթի բնակավայրերում անօրգանական փոշու (SiO₂ պարունակությունը 70% և ավելի) առավելագույն միանվագ ՍԹԿ պետք է կազմի 0.15մգ/մ³, միջին օրեկան ՍԹԿ՝ 0.05մգ/մ³:

▪ **Ջրային ռեսուրսներ**

Երևակման տարածքում խոշոր ջրագրական միավորները Հրազդան և Սև ջուր գետերն են:

Մինչև Սևանա լճի մակարդակի արհեստական իջեցումը Հրազդանը սկիզբ է առել լճից Սևան քաղաքի մոտակայքում: Գետի ավազանը նրա վերին հոսանքներում սահմանափակված է հյուսիսում Փամբակի, արևմուտքում՝ Ծաղկունյաց և արևելքում՝ Գեղամա լեռնաշղթաներով: Գետը հիմնականում հոսում է նեղ կիրճով: Երևանից ներքև նա դուրս է գալիս Արարատյան դաշտ և թափվում է Արաքս գետը Մեծամորի գետաբերանից 5 կմ ներքև: Գետի երկարությունը 141 կմ է, անկումը մոտ 1000 մ,

ջրհավաք ավազանի մակերեսը առանց Սևանա լճի 2560 կմ²: Լեռնագրական, ջրաերկրաբանական և երկրաբանական պայմաններով գետի ջրհավաք ավազանը բաժանվում է միմյանցից խիստ տարբերվող երկու մասի: Աջ ափում գերակշռում են ջրակայուն շերտերը, ձախ կողմից, ընդհակառակը, ջրահավաք ավազանը կազմված է խիստ ձեղքավորված ջրաթափանց ապարներից: Այս է պատճառը, որ գետը նշանակալի վտակներ ունի միայն աջ ափից (Մարմարիկ, Դալար, Արայիգետ):

Շնորհիվ այն բանի, որ Հրազդան գետը սկիզբ է առնում Սևանա լճից, ունի մեծ անկում, հոսում է Արարատյան գոգահովտով, հանրապետության կենտրոնական շրջաններով և մայրաքաղաքի միջով, այն իրավամբ համարվում է Հայաստանի հիմնական ջրային երակը: Գետը լիարժեք կերպով օգտագործվում է Սևան-Հրազդան ջրատնտեսական համալիրում ոռոգման և էներգետիկ նպատակներով:

Սեվ ջուր գետը Արաքսի ձախ վտակն է: Սկիզբ է առնում Մեծամոր լճից՝ 860մ բարձրությունից: Երկարությունը 38կմ է, ջրհավաք ավազանը՝ 480 կմ²: ՀՀ միակ գետն է, որն ունի հարթավայրային բնույթ (միջին թեքությունը՝ 1 մ/կմ) և ստորերկրյա սնում (93%): Հոսում է Արարատյան դաշտի ճահճապատ տեղանքներով: Տարեկան միջին ծախսը 33,9 մ³/վ է (Ռանչպար գ.): Խոշոր վտակը Քասաղն է:



Մասիս դիտակետում Հրազդան գետի և Ռանչպար դիտակետում Սև ջուր գետի հիդրոլոգիական բնութագրիչներն են.

Աղյուսակ 10.



Գետ-դիտակետ	Ջրհավաք ավազանի մակերեսը, կմ ²	Բազմամյա միջին տարեկան ելքը, մ ³ /վ	Հոսքի մոդուլը, լ/վ*կմ ²	Հոսքի շերտը, մմ	Հոսքի ծավալը, մլն.մ ³ /տ	Առավելագույն ելքը, մ ³ /վ	Նվազագույն ելքը, մ ³ /վ
Հրազդան-Մասիս	2500	25.8	11.1	350	814	174	2.31
Սև ջուր-Ռանչպար	3540	24.3	6.88	217	768	152	5.70

Գետերի որակը ներկայացվում է ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական էջի տվյալների: 2021 թվականի դեկտեմբերին Հրազդան գետի ջրի որակը Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում դեկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

**ՀՀ Հրազդանի քրավազանային կառավարման տարածքի
մակերևութային ջրերի որակը (դեկտեմբեր / 2021 թվական)**




Սև ջուր (Ռանչպար) գետի ջրի որակը Ռանչպար գյուղից ներքև հատվածներում գնահատվել է «վատ» (5-րդ դաս) (նկար 11, 12):



▪ **Հողեր**

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող երևակման շրջանում զարգացած են մարգագետնաճահճային աղուտ-ալկալի, ոռոգելի խոնավ-մարգագետնային աղուտ-ալկալի և ոռոգելի խոնավ- մարգագետնային և ոռոգելի մնացորդային մարգագետնային-գորշ խորքային-ձուլված հողերը (նկար 7):

Մարգագետնային գորշ ոռոգելի հողերը ձևավորվել են Արարատյան հարթավայրի բնահողային շրջանում՝ Արաքս գետի և նրա ձախակողմյան վտակների բերվածքների վրա, մարդու ներգործության պայմաններում: Այն հատվածներում, որտեղ հանքայնացված խորքային ջրերը մոտ են մակերեսին, առաջացել են նաև հիդրոմորֆ աղուտ-ալկալի հողեր: Այս հողերը տարածված են Արարատյան հարթավայրի համեմատաբար ցածրադիր թույլ թեք հարթություններում:



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- 1 - Մարզագետնաճահճային աղուտ-ալկալի կավավազային հողեր
- 2 - Ոռոգելի խոնավ-մարզագետնային-գորշ աղուտ-ալկալի կավային հողեր
- 3 - Ոռոգելի մնացորդային մարզագետնային-գորշ խորքային-ձուլված հողեր

Նկար 7.

Այս տիպի հողերում հողագոյացնող պրոցեսներն ընթացել են հիդրոմորֆ ռեժիմի պայմաններում: Մարգագետնային գորշ հողերում հումուսի քանակը կազմում է 3-3.5% :

Աղուտ-ալկալի հողերը աչքի են ընկնում խիստ թույլ հումուսացվածությամբ (մինչև 1%), բարձր հիմնայնությամբ, կարբոնատների զգալի պարունակությամբ (15-18%), շերտավորված մեխանիկական կազմով: Պրոֆիլում պարզորոշ առանձնացվում է մակերեսային աղային հորիզոնը, որտեղ հեշտ լուծվող աղերի քանակը 2% և ավելի է, սակայն դեպի ստորին շերտերը նրա պարունակությունը նվազում է: Հողերի գերակշռող մասին հատկանշական է փոխանակային նատրիումի բարձր պարունակությունը (առանձին շերտերում 20-25 մգ/էկվ):

«ՄԵԼ-ՄԱՐ» ՄՊԸ-ի կողմից հայցվող կոորդինատներով պարփակված տարածքի մակերեսը կազմում է 20,0 հա, և այն ընդգրկված է ՀՀ Արարատի մարզի Մասիս խոշորացված համայնքի Միս բնակավայրի վարչական սահմաններում՝ ներառված է համայնքային և քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության մի շարք հողամասեր:

Հողային հարաբերությունները կկարգավորվեն ընդերքօգտագործման թույլտվության ստացումից հետո՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հայցվող տարածքի հողերը աղտոտված չեն: Նախկինում հայցվող տարածքում որևէ աշխատանքներ իրականացված չեն եղել, որի արդյունքում հողերը կարող էին աղտոտված լինել:

Ծածկող մակաբացման ապարները ներկայացված են մասամբ աղակալված բարակ հողաբուսական տիղմակավային շերտով և մինչև 3.0 մ հզորության կավավազային ժամանակակից նստվածքներով:

- **Բուսական և կենդանական աշխարհ**

Միսի երևակման շրջանի բուսականությունը ներկայացված է համեմատաբար երիտասարդ, ստորին չորրորդական դարաշրջանից ՀՀ տարածքում իհայտ եկած աղասեր անապատային բուսատեսակներով :

Տեղամասում նշվել են օշան հավամրգանման (*Salsola ericoides* Bieb.), սարսազան կոնաձև (*Halocnemum strobilaceum* Pall. Bieb), անցողունիկ հեռացած

(*Puccinellia distans*), սեզ սողացողը (*Elytrigia repens*), հազարատերևուկ նեղատերև (*Achillea tenuifolia*), դաշտավլուկ սոխուկային (*Poa bulbosa*), օշինդր բուրավետը (*Artemisia fragrans* Willd.), լվածադիկ արծաթատերևը (*Tanacetum argyrophyllum* C. Koch. Tzvel.), փշոտ կապարը (*Capparis spinosa*) և սովորական եղեգը (*Phragmites communis*), որն աճում է ջրերի հարևանությամբ՝ առավել խոնավ հատվածներում:

Հայցվող տարածքը ուսումնասիրվել է երթուղիներով՝ ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակներ հայտնաբերելու նպատակով: Ըստ ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշման, շրջանում հայտնի են ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված հետևյալ բուսատեսակները.

- միկրոկենոմ մարջանանման – վտանգված տեսակ է, հայտնի է Մասիս քաղաքի շրջակայքում՝ աղակալած ճահիճներում և աղուտներում, տեղամասից մոտ 6.85կմ հեռավորության վրա,

- հիրիկ մուսուլմանական – վտանգված տեսակ, աճում է Մխչյան և Մասիս գյուղերի շրջակայքում՝ տեղամասից 6-8կմ հեռավորության վրա,

- ջրահարս փոքր – խոցելի տեսակ, հայտնի է Մասիս քաղաքի շրջակայքից, տեղամասից մոտ 6կմ հեռավորության վրա,

- կղմուխ Օշեի – վտանգված տեսակ, հայտնի է Մասիս քաղաքի շրջակայքից, տեղամասից մոտ 6կմ հեռավորության վրա,

- բիեներցիա շուրջաթև - կրիտիկական վիճակում գտնվող տեսակ, հայտնի է Մասիս գյուղի շրջակայքում, տեղամասից մոտ 6կմ հեռավորության վրա:

- Նետախոտ նետախոտանման– *Sagittaria sagittifolia*, կատեգորիա՝ CR B 1 ab (ii,iii,iv + 2 ab(i, ii,iii, IV), կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Համարյա անհետացած է՝ Լոռու սարահարթի լճերի բուսածածկման և Արարատյան հարթավայրի բրնձի դաշտերի ոչնչացման հետևանքով: Վերջին հավաքը իրականացվել է 1960 թ-ին: Տեսակը չի կարող պատկանել EX կատեգորիային, քանի որ պարզ չէ նրա ներկա վիճակը՝ վերջին տարիներին հատուկ որոնումներ չիրականացնելու պատճառով: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 0 կարգավիճակով՝ անհետացած տեսակ: Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում՝ տեղամասից մոտ 4,7կմ հեռավորության վրա:

- Բիեներցիա շուրջաթև– *Bienertia cycloptera* Bunge, կատեգորիա՝ CR* B 1 ab (I,ii,iii) + 2

ab(I,ii,iii), կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Տարածման և բնակության շրջանները շատ կրճատվել են Արարատյան հարթավայրում աղակալված տարածքների յուրացման հետևանքով: Հայտնի են ընդամենը երեք լոկալիտետներ, որոնք գտնվում են ինտենսիվ տնտեսական գործունեության և հողերի աղազրկման միջոցառումների իրականացման զոնայում: Այդ պատճառով սպառնալիքի կատեգորիան բարձրացվել է մինչև CR: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ: Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում՝ տեղամասից մոտ 6,2կմ հեռավորության վրա:

Հայցվող տարածքում բնական բուսածածկը բացակայում է, հողերն աղակալված են:

Խոշոր կաթնասուններ երևակման տարածքում չեն արձանագրվել: Տարածքում հայտնաբերվել են մանր կրծողներ, թռչուններ: Թռչուններից դիտարկվել է սովորական կաչաղակ և տնային ճնճղուկ, մեծ քանակությամբ՝ սովորական դաշտամուկ: Հանդիպել է 3 մրջնաբույն:

Տարածքը ուսումնասիրվել է երթուղիներով՝ ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ հայտնաբերելու նպատակով: Ըստ ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշման, Կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներից 1-ին տեղամասի շրջանում հայտնի են.

- Ուբադչի ճպուռ – սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ, հայտնի է Բուրաստան գյուղի շրջակայքից, հայցվող տեղամասից մոտ 12կմ հեռավորության վրա,
- Սիմպեկտա ճպուռ – հազվագյուտ տեսակ է, հայտնի է Արտաշատ քաղաքի շրջակայքում, հայցվող տեղամասից շուրջ 16.2կմ հեռավորության վրա,
- Վան Բրինկի նետիկ – հազվագյուտ տեսակ է, հայտնի է Մասիս քաղաքի շրջակայքից, հայցվող տեղամասից մոտ 6.4կմ հեռավորության վրա,
- Սնծոլյան ճպուռ – ծայրահեղ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ, հայտնի է Մասիս քաղաքի շրջակայքից, տեղամասից մոտ 6.6կմ հեռավորության վրա,
- Անդրկովկասյան տակիրյան կլորագլուխ – խիստ սակավաթիվ, անհետացող տեսակ, հատնի է Արտաշատի տարածաշրջանի նոսր քերոֆիտ (չորասեր) բուսածածկով ավազուտային և աղուտային կիսաանապատներում տեղամասից մոտ

6.9 կմ հեռավորության վրա,

- Փոքր ճագարամուկ - Արարատյան հարթավայրի նեղ արեալային էնդեմիկ տեսակ է, խիստ մասնատված արեալով, հայտնի է Արարատի մարզի կավային և խճաքարային կիսաանապատներում, աղուտներում և փոքր ավազուտներում (տակիրներ), չոր լեռնատափաստանի աղուտային և անապատացած բիոտոպերում, հաճախ աղուտային, ավելի հազվադեպ՝ օշինդրային բուսական խմբավորումներով:

- Աղավնաբազե - հազվագյուտ, անհետացող, սակավաթիվ և քիչ ուսումնասիրված տեսակ է, Հայաստանում չվահյուր ք.Երևանի շրջակայքում և ձմեռող Հրազդանի շրջանում, երևակման տարածքից 12- ից 55 կմ հեռավորության վրա:

- Ռուբենյանի բնդեռիկ- Աղօռետուս ուբենրանի Կալասիան, կարգավիճակը՝ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1a +B2a՝ տեղամասից մոտ 11 կմ հեռավորության վրա

- Ճչան կարապ- *Cygnus cygnus*, կարգավիճակը՝ հազվագյուտ տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «**Least Concern**» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab (iii) +2a տեղամասից մոտ 6,5 կմ հեռավորության վրա:

- Մոխրագույն սագ-*Anser anser*, կարգավիճակը՝ կարգավիճակը՝ հազվագյուտ տեսակ է, որի թվաքանակը Հայաստանում կտրուկ կրճատվում է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver 3,1) «**Least Concern**» կարգավիճակով: Բնության պահպանության

միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU D1 տեղամասից մոտ 8,9 կմ հեռավորության վրա:

- Ծվվան սագ *Anser erythropus*, կարգավիճակը՝ Չվող, բնադրող, ձմեռող, քիչ տարածված, հազվագյուտ տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «**Vulnerable A2 bcd+3bcd+4bcd**» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU A2bcd+3bcd+4bcd տեղամասից մոտ 12 կմ հեռավորության վրա:

- Փոքր ճագարամուկ-*Allactage elater* Lichtenstein- Կարգավիճակը: Արարատյան

հարթավայրի նեղ արեալային էնդեմիկ տեսակ է, խիստ մասնատված արեալով: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1ab (ii,iii,iv) տեղամասից մոտ 6կմ հեռավորության վրա:

- Մարգագեանային ծիծառակացար – *Glareola pratncola*, կարգավիճակը՝ Հայաստանում հազվագյուտ տեսակ է, բնադրման տեղային բնույթով: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU D1 տեղամասից մոտ 7,8կմ հեռավորության վրա:

Սիսի 1221երևակման տարածքում վերը նշված կենդանական տեսակները չեն դիտարկվել:

▪ **Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ**

Սիսի 1221 երևակումը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում : Բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան նաև հայցվող տեղամասին հարակից տարածքներում : Արարատի մարզում, հայցվող տեղամասից մոտ 24կմ հեռավորության վրա, գտնվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցը, որը հիմնադրվել է 1958 թվականին: Արգելոցը գտնվում է Արարատի մարզում Արարատյան դաշտի հարևանությամբ՝ Գեղամա լեռնաշղթայի լեռնաբազուկների, Երանոսի և Երախի լեռների վրա, երևակման տարածքից ավելի քան 20կմ հեռավորության վրա: Այն զբաղեցնում է 23213.5հա տարածք, տեղակայված է ծովիմակարդակից 700-ից մինչև 2800 մ բարձրության վրա: Արգելոցի բուսական աշխարհը ներառում է անոթավոր բույսերի 1849 տեսակ: Ավելի քան 80 տեսակ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում, իսկ 24 տեսակը էնդեմիկ են: Արգելոցի տարածքի 16%-ը անտառածածկ է: Բացատները, թփուտները և մացառուտները զբաղեցնում են տարածքի մետ 20%-ը: Տարածքի մնացած 64%-ը զբաղեցնում են լեռնային քսերոֆիտների տարբեր տիպի համակեցություններ:

Կենդանական աշխարհը ներառում է կաթնասունների՝ 44, թռչունների՝ 192,

սողունների՝ 33, երկկենցաղների՝ 5 և ձկների՝ 9 տեսակներ: Արգելոցի ժայռային, քարքարոտ, խիստ թեքություն ունեցող սարալանջերը ապրելավայր են հանդիսանում գորշ արջի (*Ursus arctos syriacus*), բեզարյան այծի (*Capra aegagrus*), կովկասյան ընձառյուծի (*Panthera pardus ciscaucasica*) համար, որոնք գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում:

Արգելոցի առանձնահատկություններից է նաև պատմական և մշակութային հարուստ ժառանգությունը՝ սկսած վաղնջական ժամանակներից: Տարածքը սերտորեն կապված է հայ ժողովրդի պատմության և պատմական անցյալի փառահեղ դրվագների հետ՝ սկսած բազմաստված հեթանոսական և հելլենիստական մշակույթի շրջաններից: Արգելոցում մինչ օրս պահպանվում են բազմադարյան պատմություն ունեցող մշակութային կոթողներ, պատմաճարտարապետական հուշարձաններ, բույսերի և կենդանիների եզակի տեսականեր, լանդշաֆտների հիասքանչ բազմազանություն:

Տեղամասից մոտ 28կմ հեռավարության վրա է գտնվում մեկ այլ բնության հատուկ պահպանվող տարածք՝ «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրը, որտեղ բուսականության հիմնական տիպը ավազային ջուզգունային անապատն է: Սա միակ տեղամասն է Փոքր Կովկասում որտեղ ներկայացված են ջուզգունի համակեցությունները, և խիստ հազվագյուտ է ողջ Կովկասի համար: Արգելավայրը անոթավոր բույսերի հազվագյուտ և անհետացող տեսակների բացարձակ թվաքանակով Հայաստանում գտնվում է առաջին տեղում /10 տեսակներ գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում/: Ընդհանուր առմամբ արգելավայրի տարածքում աճում են 160 տեսակի անոթավոր բույսեր: Էնդեմիկ ներկայացուցիչներից են *Salsola tamamschjanae*, *Acantholimon araxanum*: Այստեղ աճում են նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և արժեքավոր մի շարք այլ տեսակներ: Ողնաշարավորների ֆաունան հաշվվում է մոտ 20 տեսակ: Տարածքից հայտնի են Հայաստանի համար էնդեմիկ հանդիսացող 12 տեսակ բզեզներ:

Երևակման տարածքից մոտ 26կմ հեռավորության վրա գտնվում է «Խոր վիրապ» պետական արգելավայրը, որը հիմնվել է 2007 թվականի հունվարի 25-ի N975-Ն որոշմամբ Փոքր Վեդու գյուղական համայնքի վարչական սահմաններում, Արաքս գետի ձախակողմյան մասի Խոր Վիրապ եկեղեցական համալիրի և

Հայաստանի հնագույն մայրաքաղաք Արտաշատի աջակողմյան հատվածում գտնվող՝ 50,28 հեկտար տարածքում խոնավ տարածքի էկոհամակարգի, դրա բաղադրիչների, բուսական ու կենդանական տեսակների պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումն ապահովելու նպատակով: Արգելավայրի հատուկ պահպանության օբյեկտները մերձարաքայան խոնավ տարածքի էկոհամակարգի յուրահատուկ կենդանական աշխարհն ու ջրաճահճային բուսականությունն են:

Արգելավայրի հիմնական խնդիրներն են՝

1) «Խոր Վիրապ» արգելավայրի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության բնականոն զարգացման ապահովումն ու պահպանությունը.

2) խոնավ տարածքի էկոհամակարգի էկոլոգիական հավասարակշռության, այդ թվում՝ ջրային ռեժիմի պահպանությունը.

3) վայրի բուսատեսակների և կենդանիների բնական միջավայրի պահպանությունը.

4) վտանգված, կրիտիկական վիճակում գտնվող, խոցելի, անհետացման եզրին գտնվող, ինչպես նաև Հայաստանի Կարմիր գրքում ընդգրկված բույսերի և կենդանիների տեսակների պահպանությունն ու վերարտադրությունը.

5) գիտաճանաչողական և էկոլոգիական զբոսաշրջության իրականացման նախադրյալների ստեղծումը:

Բնության հատուկ պահպանվող տարածք է համարվում նաև բնության հուշարձանը : ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը, որոնք նույնպես հանդիսանում են բնության հատուկ պահպանվող տարածքներ:

ՀՀ Արարատի մարզում հաշվառված են բնության հուշարձանների ցանկը, ինչպես նաև դրանց գտնվելու վայրը ներկայացված է աղյուսակ 11-ում :

Աղյուսակ 11.

Հ/Հ	Անվանումը	Տեղադիրքը
1.	«Անձավիկ» քարանձավ	Վեդի քաղաքից մոտ 20 կմ հս-արլ, Ուխտուակունք գետի աջ ափին, Դարբանդ գետի հետ միախառնման տեղից 8 կմ հոսանքով վեր, 40 մ գետի հունից բարձր, ծ.մ-ից 2100 մ բարձրության վրա
2.	«Դաշտաքար» քարանձավ	Դաշտաքար գյուղից 0,2 կմ հվ, Անահավատքար լեռան հս լանջին, հիմքից 400մ բարձրության վրա
3.	«Մեծ հոր» համակարգ անձավային համակարգ»	Շաղափ գյուղից 3 կմ հս-արլ, ծ.մ-ից 2200 մ բարձրության վրա
4.	«Անանուն» շերտավոր նստվածքներ	Տիգրանաշեն-Պարույր Սևակ գյուղերի ճանապարհի 17-րդ կմ-ի վրա
5.	«Անանուն» անտիկլինալ ծալք	Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
6.	«Անանուն» ծալքավոր ստրուկտուրա	Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
7.	«Անանուն» ծալքագոյացման մերկացում	Ուրցաձոր գյուղից 4,5 կմ դեպի հս, Վեդի գետի աջ ափին
8.	«Հորթունի» բրածո ֆլորա	Զանգակատուն գյուղից 8 կմ հս-արլ
9.	«Ջերմանիսի» բրածո ֆլորա	Ուրցաձոր գյուղից մոտ 20 կմ գետի հոսանքով վեր, նախկին Ջերմանիս գյուղատեղիի մոտակայքում
10.	«Վեդի գետի ավազանի» բրածո ֆաունա	Վեդի գետի ավազան, Ուրցաձոր գյուղից 15 կմ հս-արլ
11.	«Աղակալած ճահճուտ»	քաղ. Արարատ, հանքային աղբյուրների մոտ, ծ.մ-ից մոտ 850 մ բարձրության վրա

Երևակման տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն: Հայցվող տարածքին ամենամոտ գտնվող բնության հուշարձանի հեռավորությունը կազմում է մոտ 36կմ:

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է կենսաբազմազանության պահպանությանը վերաբերող Եվրախորհրդի Բեռնի կոնվենցիան, որի շրջանակներում ՀՀ տարածքում «Էմերալդ» ցանցի ստեղծման նպատակով առանձնացվել են բնապահպանական տեսակետից 23 արժեքավոր տարածքներ:

Ներկայումս Հայաստանի «Էմերալդ» ցանցի թեկնածու-տարածքների նախնական ցանկը գտնվում է վերանայման փուլում:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող Սիսի երևակման տեղամասը չի գտնվում «Էմերալդ» ցանցի թեկնածու-տարածքներից որևիցե մեկի սահմաններում: Հայցվող տեղամասի շրջանում են գտնվում Էմերալդ ցանցի «Խոսրովի անտառ» և «Խոր Վիրապ-Արմաշ» պոտենցիալ տարածքները :

«Խոսրովի անտառ» պետական արգելոց տարածքն զբաղեցնում է 63794.7 հա մակերես, ընդգրկում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցը, Ուրցի լեռնաշղթայի ստորոտը, Երախի լեռնաշղթան, «Գոռավանի ավազուտներ» արգելավայրը, մինչև Ազատ գետի կիրճն ընկած տարածքը՝ ներառյալ Երանոս լեռը: Պոտենցիալ տարածքի և երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տեղամասի միջև նվազագույն հեռավորությունը կազմում է մոտ 25կմ:

«Խոր Վիրապ-Արմաշ» պոտենցիալ տարածքն զբաղեցնում է 6998.2 հա մակերես, ընդգրկում է «Խոր Վիրապ» արգելավայրը և «Արարատյան աղակալած ճահիճներ» բնության հուշարձանը՝ ներառյալ մինչև Նախիջևանի ինքնավար հանրապետության հետ սահմանը և հարավում Արաքս գետն ընկած տարածքները: Պոտենցիալ տարածքի և Սիսի 1221 երևակման միջև նվազագույն հեռավորությունը կազմում է մոտ 26կմ :

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

- **Ենթակառուցվածքներ**

Երևակման հայցվող տարածքը տարածական առումով գտնվում է ՀՀ Արարատի մարզում:

Մարզի ընդհանուր տարածքը՝ 2096 քկմ է, կազմում է Հայաստանի Հանրապետության տարածքի 7 %-ը:

Մարզն ունի շուրջ 258.9 հազար բնակչություն, որից 73.0 հազ. քաղաքաբնակներ են (28%), 185.9 հազարը՝ գյուղաբնակ (71%): Արարատի մարզի բնակչության խտությունը՝ 141 մարդ մեկ քառակուսի կիլոմետրի վրա, Արմավիրի մարզի բնակչության խտությունը կազմում է 215 մարդ 1 քկմ-ի վրա, այն դեպքում երբ ՀՀ-ում միջին խտությունը կազմում է 101 մարդ: ՀՀ-ում ամենաբարձր բնակչության խտությունը գրանցված է մայրաքաղաքում՝ 4815 մարդ 1 քկմ-ի վրա: Արարատի մարզը այս ցուցանիշով մարզերի մեջ գրավում է 2-դ տեղը Արմավիրից հետո:

Մարզի բնակչությունը համարյա հավասարաչափ տեղաբաշխված է 3 տարածաշրջաններում: Մարզի մշտական բնակչությունը ըստ տարածաշրջանների հետևյալն է՝ ամբողջ ազգաբնակչությունը կազմում է 258.9 հազար մարդ, որից Արտաշատի տարածաշրջանում 90.4 հազար մարդ, Արարատի տարածաշրջանում 89.5 հազար մարդ, Մասիսի տարածաշրջանում՝ 79 հազար մարդ:

Արարատի մարզում բնակչության տեղաբաշխումը հավասարաչափ չէ, ամենամեծ կուտակումը մարզում Արտաշատի և Մասիսի տարածաշրջաններում են՝ հիմնականում հարթավայրային մասում դեպի մայրաքաղաքի ուղղությամբ, դեպի նախալեռնային և լեռնային բնակավայրեր՝ բնակչության խտությունը կտրուկ նվազում է:

Մարզը բնակչությամբ համարյա միատարր է, հիմնականում բնակեցված է հայերով՝ 93%, ազգային փոքրամասնություններից մարզում ապրում են եզդիներ 2.5%, ասորիներ 0,09%, քրդեր 0.05%, ռուսներ 0.4%:

ՀՀ Արարատի մարզի տնտեսապես ակտիվ բնակչության թիվը 128.1 հազար մարդ է, որը կազմում է մարզի ընդհանուր բնակչության 49.5%-ը: Տնտեսապես ակտիվ

բնակչության կշիռը Արարատում գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշը և Արմավիրի մարզի ցուցանիշը:

Արարատի մարզում տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 69.3%, որը հանրապետական միջին ցուցանիշից բարձր է 6.8%-ով: Տարբերություններ կան տղամարդկանց (71.7%) և կանանց (65.2%), ինչպես նաև քաղաքային (44%) և գյուղական (82%) տարածքների միջև: Համեմատած Արմավիրի մարզի հետ տնտեսական ակտիվության մակարդակը բարձր 1.7%-ով:

ՀՀ Արարատի մարզում առկա են 7087 գործող (ակտիվ) ձեռնարկություններ, որը կազմում է հանրապետության մարզային ցուցանիշի 11.6%-ը, 10000 բնակչի հաշվով ձեռնարկությունների թիվը կազմում է 274, իսկ Արմավիրի մարզում առկա են 9087 գործող (ակտիվ) ձեռնարկություններ, որը կազմում է հանրապետության մարզային ցուցանիշի 14.9%-ը, 10000 բնակչի հաշվով ձեռնարկությունների թիվը կազմում է 341: Ինչպես և ՀՀ բոլոր մարզերում այստեղ նույնպես ձեռնարկությունների գերակշռող մասը ունի մի քանի աշխատող և կարող են համարվել ՓՄՁ ձեռնարկություններ:

Մարզի տնտեսության հիմնական ցուցանիշներն ըստ ՀՀ տնտեսության ճյուղերի հետևյալն են՝

արդյունաբերություն՝ 12.9 %, գյուղատնտեսություն՝ 14.1 %, շինարարություն՝ 2.1 %, մանրածախ առևտուր՝ 2.7 %, ծառայություններ՝ 1.6 %:

Մարզը Հայաստանի արդյունաբերական և գյուղատնտեսական առաջատարներից է՝ այստեղ մեկ շնչի հաշվով արտադրվող արդյունաբերական արտադրանքը ավել է քան ՀՀ միջին ցուցանիշը շուրջ 1.5 անգամ, իսկ գյուղատնտեսական արտադրանքը շուրջ 1.6 անգամ, այլ ոլորտներում մարզը զգալիորեն զիջում է ՀՀ միջին ցուցանիշներին:

Արդյունաբերություն Արարատի մարզը Հայաստանի Հանրապետության զարգացած արդյունաբերական մարզերից է: ՀՀ արդյունաբերության ծավալի 12.9 %-ը կազմում է Արարատի մարզի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքը: Արարատի մարզի տնտեսության մեջ էական կշիռ ունեն գինու-կոնյակի 10-ից ավելի խոշոր գործարանները, “Արարատ – ցեմենտ”, “Ոսկու կորգման

Ֆաբրիկան”, Արտաշատի, Արարատի պահածոների, “Մասիս տոբակո”, “Ինտերնեշնլ Մասիս տոբակո” գործարանները:

Արդյունաբերության առաջատար ուղղությունները սննդամթերքի, ներառյալ՝ խմիչքների, արտադրություններն են և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը:

Մարզի բազմաճյուղ արդյունաբերության հիմնական և գլխավոր ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ 3 ճյուղերը.

1) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն)

2) ծխախոտի արտադրություն (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա)

3) ոչ մետաղական հանքային արտադրանքի արտադրություն (ցեմենտի, կրի, ազբոցեմենտային իրերի արտադրություն, քարի կտրում և վերամշակում):

Մարզի արդյունաբերական արտադրության 92.3%-ը բաժին է ընկել մշակող արդյունաբերությանը, որը հիմնականում գյուղմթերքի վերամշակությունն է և որը մեծապես պայմանավորված է մարզում գյուղատնտեսական բարձր արտադրողականությանը:

Գյուղատնտեսություն. Արարատի մարզի տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է՝ այն հիմնականում մասնագիտացած է պտղաբուծության, խաղողագործության, բանջարաբուծության մեջ: Արարատի մարզի հարթավայրային և նախալեռնային գոտիները նպաստավոր են բուսաբուծության, իսկ լեռնային գոտիները՝ անասնապահության զարգացման համար: Մարզի ազգաբնակչության 71.5% բնակվում է գյուղական վայրերում, որոնց կենսունակությունը պայմանավորված է գյուղատնտեսական գործունեությամբ:

Մարզի գյուղատնտեսական հողատեսքերը՝ ներառյալ տնամերձերը՝ 164 696 հա, կազմում են մարզի ընդհանուր տարածքի 78.8%-ը: Գյուղատնտեսական հողատեսքերի 7.6%-ը: կազմում են մշակովի տարածքները՝ ներառյալ տնամերձերը 42 260 հա:

Մարզի ակտիվ գյուղատնտեսական ուղղվածության ձեռնարկությունները 31- են, որոնցից 6-ը զբաղվում են կաթի վերամշակմամբ, 2-ը՝ մսի, մնացած 23-ը՝

բուսաբուծական մթերքների վերամշակմամբ: Վերամշակող կազմակերպությունների կողմից Արարատի մարզում ավելացել են 24.4%-ով, հանրապետությունում՝ 44.6%-ով: Մարզից արտահանվում է հիմնականում գյուղմթերքի վերամշակումից ստացված արտադրանք՝ գինի, կոնյակ, միրգ, բանջարեղեն, պահածոյացված գյուղմթերք՝ և հանրապետությունում և հանրապետությունից դուրս մեծ պահանջարկ ունեն Արարատի մարզի քաղցրահամ մրգերը, բարջարեղենը, մուրաբաները, բնական հյութերը, չրերը: Մարզի արտահանման մեջ մեծ ծավալներ են կազմում բնական հանքաքարերի արտահանումը:

- **Հողերի տնտեսական յուրացման բնութագիր**

Երևական տարածքը գտնվում է Մասիս խոշորացված համայնքի Սիս բնակավայրի սահմաններում:

Բնակավայրն ունի դպրոց, գրադարան, մանկապարտեզ, բուժկետ, կապի հանգույց:

Տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է, համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը:

Ըստ 2021 թվականի հողային հաշվեկշռի ՀՀ Արարատի մարզի Սիս համայնքի վարչական տարածքի մակերեսը 1476.4հա է, այդ թվում գյուղատնտեսական նշանակության 348.70հա, որից վարելահող 74.70հա, խոտհարք 85.11հա, արոտ 112.32հա, այլ հողատեսքեր 76.57հա:

Զբաղվում են կաթնամսատու անասնապահությամբ, թռչնաբուծությամբ, ձկնաբուծությամբ:

Արդյունաբերական ձեռնարկություններ չկան:

Բնակավայրի հիմնախնդիրների մեջ կարևորվում է ոռոգման ջրի հիմնախնդիրը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ Սիս բնակավայրի մշտական բնակչությունը կազմում էր 1498 մարդ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բնույթը և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը ներկայացվել են Սիս

բնակավայրի բնակիչներին: Քննարկվել է ծրագրավորվող երկրաբանահետախուզական աշխատանքներին համայնքի բնակիչների ներգրավման հարցը :

▪ **Պատմության, մշակութային հուշարձաններ**

ՀՀ կառավարության 2002 թվականի հունվարի 24-ի թիվ 65-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ Արարատի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը: Միս բնակավայրում պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ հաշվառված չեն:

Հետևաբար, երևակման տարածքում ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները չեն կարող բացասաբար անդրադառնալ պատմամշակութային հուշարձանի իրավիճակի վրա:

ՌԵԿՈՒՆԻՏԻՎԱՑԻՈՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ռեկուլտիվացիոն աշխատանքներ նախատեսված են միայն հորատանցքերի հորատումից հետո տեսչական ստուգումների իրականացումից հետո հետլիցք իրականացնել հորատանցքերը:

Ծրագրով նախատեսված են 16 հորատանցքեր՝ 112մ և 93մ տրամագծերի հորատման թափկներով :

Նախատեսվում է հորատման ժամանակ հանել վերին հողագրունտային շերտը, պահեստավորել անմիջապես հորատանցքի հարևանությամբ, իսկ տեսչական ստուգումների ավարտից հետո, իրականացնել ռեկուլտիվացիա:

Աշխատանքները կատարվելու են ձեռքով:

Վերականգնման ենթակա ընդհանուր մակերեսը 16 հորատանցքերի մակերեսը կկազմի՝ 0.157քմ, որի վերականգնման ծավալը կկազմի $0.157 \text{ մ}^2 \times 64\text{մ} = 10.048\text{մ}^3$.

Ընդամենը հորատվելու է 128գմ հորատանցք, ետլիցք կիրականացվի 64գմ-ի չափով, քանի որ հորատումից անմիջապես հետո, ավազները կփլվեն ետ՝ մոտ կիսով չափ հորատանցքի խորությամբ:

Ռեկուլտիվացիայի գումարը կկազմի՝ $10.048 \times 600 = 6030$ ՀՀ դրամ:

Ռեկուլտիվացիայի համար նախատեսված գումարը և մակերեսները հաշվարկվել է Կառավարության 18.08,2021թ.-ի 1352-Ն որոշման պահանջներին համապատասխան:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱՂԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹՍԳԻՐԸ

Երևակման տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքերի իրականացման ընթացքում աննշան ազդեցություններ են դրսևորվելու մթնոլորտի, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության վրա:

Մթնոլորտային օդ.

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում կիրառվող ավտոտրանսպորտը դառնալու է գազերի և փոշու արտանետման աղբյուր: Կապիլյար ներծծման հաշվին կուտակը գտնվում է խոնավ վիճակում, ինչի հետևանքով երևակման տարածքում հետախուզական փորվածքների անցման, նմուշառման ժամանակ փոշեգոյացում չի կատարվելու: Փոշեգոյացում կլինի միայն երևակման տարածքին մոտեցնող ճանապարհների վրա :

Աշխատանքների իրականացման ժամանակ ընկերությունը առաջնորդվելու է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ, համաձայն որի ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի (երկօքսիդի հաշվարկով), մրի և ծծմբային անհիդրիդի սահմանային թույլատրելի խտությունները (ՄԹԿ) համապատասխանաբար կազմում է 5մգ/մ^3 , 0.2մգ/մ^3 , 0.15մգ/մ^3 և 0.5մգ/մ^3 :

Ընդհանրական գնահատկաններով, աշխատանքների ընթացքում կանխատեսվում է անօրգանական փոշու 0.02գ/վրկ , ածխածնի օքսիդ 0.000005գ/վրկ , ազոտի երկօքսիդի 0.0000019գ/վրկ արտանետումներ :

Երևակման տարածքին մոտեցնող ճանապարհներին աշխատանքները սպասարկող մեքենաների տեղաշարժի հետևանքով գոյացող արտանետումները չեն գերազանցելու սահմանային թույլատրելի խտությունները (ՄԹԿ) :

Ջրային ավազան. Աշխատանքների հետևանքով՝ ջրերի կապիլյար ներծծման համակարգի գործունեության հետևանքով, կարող է դրսևորվի աննշան ազդեցություն Սև ջուր ջրերի պղտորության, կախյալ մասնիկների պարունակության վրա :

Հողային ծածկույթ.

Հողային ծածկույթի ազդեցություն չի դրսևորվելու, քանի որ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծավալները շատ փոքր են: Այստեղ հողաբուսական շերտ չկա, այսինքն հետախուզական

փորվածքների անցման ժամանակ հող չի խախտվելու: Ճանապարհի շինարարություն նույնպես չի նախատեսվում, քանի որ գոյություն ունի օգտագործվող բարեկարգ բնահողային ճանապարհ: Տարածքի մակերեսը ներկայացված է տիղմավազակավային- հողանման զանգվածով, որը հետլցման աշխատանքներից հետո նախատեսվում էփխրեցնել :

Բուսական և կենդանական աշխարհ.

Տեղամասի բուսականությունը ներկայացված է անապատային աղասեր բուսականության բնորոշ, Հանրապետության տարածքի ֆոնային տեսակներով, որոնք լայն տարածված են Արարատի և Արմավիրի մարզի անապատային լանդշաֆտներում : Խոշոր կաթնասունների ապրելավայրեր տարածքում չկան, չեն արձանագրվել Բույսերի և Կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ, հետևաբար երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների հետևանքով տարածքի կենսաբազմազանության վրա ազդեցություն գրեթե չի դրսևորվելու :

Աղտոտում ընդերքօգտագործման թափոններով. Երևակման տարածքում առաջանալու է միայն չտեսակավորված կենցաղային աղբ (օրեկան առավելագույնը 10կգ), ծածկագիրը 91200400 01 00 4, կազմը՝ ապակի 9-14%, փայտ 8-13%, թուղթ 25-30%, կտոր 3-7%, սննդի մնացորդ 21-24%, պոլիմերներ 7-12% և այլն:

Բնության հատուկ պահպանվող տարածքների վրա ազդեցությունների դրսևորում չի նախատեսվում, քանի որ «Խոսրովի անտառ» պետական արգելոցը, «Գոռավանի ավազուտներ» և «Խոր Վիրապ» պետական արգելավայրերը գտնվում են հայցվող տարածքից 25-28կմ հեռավորությունների վրա: Հայցվող տարածքում հաշվառված չեն բնության հուշարձաններ:

Պատմամշակութային հուշարձաններ ավազի երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տարածքում չկան, ինչը բացառում է որևիցե բացասական ազդեցությունների դրսևորում պատմամշակութային ժառանգության օբյեկտների վրա:

Աղմուկ և թրթռումներ

Շրագրավորվող աշխատանքների անբարենպաստ ներգործություն ունեցող գործոններից մեկը կարող է լինել առաջացող աղմուկը: Նախնական հաշվարկներով

աշխատանքների ժամանակ առաջանալու է 25դԲա աղմուկ, ինչը գրեթե 2 անգամ ցածր է բնակելի գոտում աղմուկի թույլատրելի մակարդակից (45 դԲԱ):

«Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմեր» ՍՆ 245-71 նորմերով, ավազի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համար սանիտարական պաշտպանական գոտիներ նախատեսված չեն:

**5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ**

ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Վառելիքի հիմնական լիցքավորման և քսայուղերի փոխարինման աշխատանքները կատարվելու են հարակից բնակավայրերում՝ համապատասխան ծառայություն մատուցող կայաններում:
- Աշխատանքների ժամանակ կիրառվող սարքավորումների և մեքենաների վրա արտաթորվող թունավոր նյութերի ֆիլտրերի տեղադրում :
- Փոշենստեցման նպատակով տեղամասին մոտեցնող ճանապարհի ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին : Տեխնիկական և կենցաղային նպատակներով ,ինչպես նաև խմելու համար անհրաժեշտ ջուրը գնվելու է Միս բնակավայրից՝ պայմանագրային հիմունքներով /եթե Միս բնակավայրը չունենա անհրաժեշտ որակի ջուր, ապա այն կգնվի մոտական այն համայնքից կամ բնակավայրից, որը կունենա համապատասխան թույլտվություն, այդ գործընթացը կիրականացվի ուսումնասիրության թույլտվություն ստանալուց հետո/: Ըստ գործող նորմատիվների՝ 1մ² տարածքի ջրցանման համար անհրաժեշտ տեխնիկական ջրի քանակը կազմում է 1,5լ: Անհրաժեշտ տեխնիկական ջրի ծավալը կորոշվի օրական կտրվածքով՝ կախված աշխատանքների վայրից, ծավալից, եղանակային պայմաններից:
- Արգելվում է փոփոխել, ձևափոխել կամ այլ կերպ օգտագործել ջրային ռեսուրսի հունը կամ ափերը, եթե դա չի սահմանվում որպես ջրօգտագործման թույլտվության առանձին պայման: Հայցվող տարածքը գետից գտնվում է նվազագույնը 1,0կմ

հեռավորության վրա և որևէ ազդեցություն ջրային ռեսուրսի հունի վրա ունենալ չի կարող:

- Աշխատակիցների կենցաղային պայմանների ապահովման նպատակով տարածքում բեռնակղային տիպի վագոն-տնակի տեղադրում, որը կօգտագործվի որպես հանդերձարան և հանգստի սենյակ: Ջրցողարանի տեղադրում չի նախատեսվում՝ հաշվի առնելով ծրագրավորվող աշխատանքների փոքր ծավալները և կարճ տևողությունը : Աշխատակիցների կենցաղային անհրաժեշտ պայմանների ապահովման համար հարակից բնակավայրում վարձակալվելու է բնակելի տուն :

- Նախատեսվում է տեղադրել բիոզուգարաններ :

- Կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարողություններում, 50լ տարողությամբ պոլիէթիլենային պարկերում, աղբահանության պայմանագրի կնքում տարածաշրջանում գործող օպերատորի հետ, աղբահանության վճարի հաշվարկումն վճարում:

- Օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով:

- ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի թիվ 64-Ն որոշման հավելվածի 6-րդ կետով նախատեսված է, որ ջրային աղբոսման, աղտոտման, տղմակալման և հյուծման կանխարգելման նպատակով պետք է սահմանվի ջրապահպան գոտիներ: Այս պահանջը հայցվող տարածքում բավարարված է:

- Հետախուզահորեր նախատեսված չեն, նախատեսված են միայն հորատանցքեր, ռեկուլտիվացիոն աշխատանքները բացակայում են: Արտադրական հրապարակներ չի կառուցվելու, քանի որ հայցվող տարածքը հարթ է:

- Նախատեսվում են աշխատողների սանիտարակենցաղային հարմարություններ՝ հանդերձարան, ցնցուղարան, զուգարան և հանգստի սենյակ՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանի:

- Աշխատանքների ժամանակ աղմուկի և թրթռումների վերահսկողություն :
Համաձայն գործող նորմատիվ փաստաթղթերի,
արտադրական կազմակերպությունների մշտական
աշխատատեղերով տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը

չպետք է գերազանցի 95դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում ձայնի մակարդակը չպետք է գերազանցի 80դԲԱ: Երկրաբանական ուսումնասիրության աշխատաքների տեխնոլոգիական գործընթացների հետ կապված առաջանալու է առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Թրթռումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:

- ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում՝ ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացնելիս ընկերության կողմից գործունեության հայտում և հետագայում՝ գնահատման հաշվետվության մեջ ներառվում և հետագայում իրականացվում են հողերում առկա օբյեկտների պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները՝ վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրության (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ) իրականացում, որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնին.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված թունաքիմիկատների օգտագործման կանխարգելում:

Տեղամասում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է՝

1) առանձնացնել օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

2) Ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու

պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխում են տնտեսական գործունեության արդյունքում ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

– Հանքավայրի տարածքում ՀՀ Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների հայտնաբերման դեպքում ձեռնարկել միջոցառումներ դրանց պահպանության համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, համաձայնեցնելով դրանք պետական կառավարման լիազոր մարմնի հետ:

– Հանքավայրի տարածքում հասցնում Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կենդանիների հայտնաբերման դեպքում, ընկերությունը պարտավոր է միջոցներ ձեռնարկել դրանց պահպանության համար, բացառելով տեսակների թվաքանակի կրճատումը և դրանց ապրելավայրերի վատթարացումը: Միջոցառումները պետք է համաձայնեցվեն պետական կառավարման լիազոր մարմնի հետ:

– Պատահական գտածոների ընթացակարգի կիրառում՝ հետևյալ միջոցառումների իրականացման միջոցով.

✓ համապատասխան անձնակազմի և պայմանագրով աշխատողների ուսուցում պատահական հնագիտական գտածոների ճանաչման, դրանց հետ վարվելակերպի և արձագանքի ուղղությամբ;

✓ գտածոների ուսումնասիրություն հրավիրված հնագետների կողմից, որպեսզի վերջիններս ուղղորդեն հնագիտական գտածոների ճանաչման և արձագանքման գործընթացը,

✓ արձանագրությունների կազմում պատահական գտածոներին արձագանքելու համար, ներառյալ աշխատանքի ժամանակավոր դադարեցումը գտածոների

հայտնաբերման վայրում;

- ✓ պետական մարմինների ծանուցում,
- ✓ պատահական գտածոների գնահատման և պեղումների արագացված ընթացակարգերի կիրառում, ազդեցությունների սահմանափակման համար, միաժամանակ նվազեցնելով շահագործական աշխատանքների ուշացումները:

6. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Երևակման տարածքում հնարավոր արտակարգ իրավիճակների նկարագիրը ներկայացվում է ստորև :

I. Արտածին երկրաբանական երևույթներով պայմանավորված արտակարգ իրավիճակներ

Համաձայն Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագրի (Միջազգային համագործակցության Ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005) տեղամասի շրջանում սողանքային երևույթներ չեն արձանագրվել: Հետևաբար, սողանքային երևույթների հետ կապված արտակարգ դրություններ չեն լինելու:

II. Երկրաշարժով պայմանավորված արտակարգ իրավիճակներ

Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N 102-Ն հրամանի՝ 1-ին տեղամասի տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 300սմ/վրկ² գրունտի հորիզոնական արագացման մեծություն:

Երկրաշարժի հետ կապված արտակարգ իրավիճակներում արագ արձագանքելու նապատակով նախատեսվում է տեղամասում աշխատող անձնակազմի համար կազմակերպել իրազեկման դասընթացներ և ներկայացնել գործողությունների համառոտ ծրագիրը: Երկրաշարժի դեպքում՝ ցնցումները զգալու ժամանակ հանքում աշխատող անձնակազմը պարտավոր է.

- անջատել բոլոր գործող սարքավորումները, մեխանիզմներն ու մեքենաները,
- հեռանալ մեքենաների և մեխանիզմների տեղակայման վայրից,
- դուրս գալ վագոն-տնակից,
- կանգնել բացօթյա տարածքում,
- կապ հաստատել կազմակերպության ղեկավարության հետ՝ իրազեկելով տարածքում գտնվող աշխատակիցների քանակի և ընդհանուր իրավիճակի

վերաբերյալ,

- կապ հաստատել տարածքային կառավարման մարմինների հետ՝ իրագրելով տարածքում գտնվող աշխատակիցների քանակի և ընդհանուր իրավիճակի վերաբերյալ,

- հանքի սպասարկող մեքենաներով ապահովել աշխատակիցների տարհանումը,

- տեղամասում տեղադրված վագոն-տնակում ապահովել առաջին բուժօգնության համար անհրաժեշտ դեղորայքի առկայությունը:

III. Գարնանային վարարման հետ կապված արտակարգ իրավիճակներ

Տեղամասի տարածքում արտակարգ իրավիճակները կարող են կապված լինեն Հրազդան և Արաքս գետերի վարարման հետ:

Համաձայն գետի բազմամյա դիտարկման տվյալների՝ վարարման շրջանը տևում է մոտ 2,5 ամիս՝ ապրիլից հունիս:

Վարարման շրջանում, ըստ անհրաժեշտության, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ չեն կատարվելու, տեխնիկական միջոցները հեռացվելու են տեղամասից, ինչը թույլ է տալիս բացառել վարարման հետ կապված բոլոր խնդիրներից:

IV. Հրդեհային անվտանգությունն ապահովելու համար աշխատակիցները տեղեկացվելու են տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ: Նշանակվելու է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակվելու է հրդեհի դեպքում անձնակազմի գործողությունների պլան: Տեղամասում՝ հատուկ հատկացված վայրում տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավազով արկղ, բահ:

V. Անբարենսպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագացում, անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ, թանձր մառախուխ, ամպրոպ) : Անբարենսպաստ օդերևութաբանական պայմանների իհայտ գալու դեպքում կիրառվում են հետևյալ միջոցառումները (ըստ իրավիճակի).

- ավելացվում է կատարվելիք ջրցանը,

- կրճատվում է աշխատանքի տևողությունը,

- կրճատվում է միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակությունը,

- նվազեցվում է փոշեգոյացման հետ կապված աշխատանքների ծավալները,
- բեռնատար մեքենաները կահավորվում են հատուկ մառախուղի լույսերով,
- աշխատակիցները պատսպարվում են տեղամասի տարածքում տեղադրված վազոն-տնակում:

Երևակման տարածքում աշխատանքների անվտանգ իրականացման նպատակով.

- աշխատանքի են թույլատրվում անձիք, որոնք ունեն հատուկ պատրաստվածություն և որակավորում,
- օգտագործել մեքենաներ և մեխանիզմներ, սարքավորումներ և նյութեր, որոնք համապատասխանում են անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին,
- անցկացնել պլանային-զգուշացնող համալիր վերանորոգումներ, պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլ դիտարկումներ,
- աշխատանքի ժամանակ պետք է պահպանվեն անվտանգության տեխնիկայի կանոնները:

Նախատեսվում է կատարել պլանային աշխատանքներ ուղղված արտադրական տրավմատիզմի նվազեցմանը, ժամանակին, ոչ ուշ քան երեք ամիսը մեկ, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով:

7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ երկրաբանական ուսումնասիրության ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ,
2. Սև ջուր, Հրազդան գետի ջրերի որակի մշտադիտարկում, շաբաթական մեկ անգամ հաճախականությամբ,
3. տեղամասում և հարակից տարածքում կենսաբազմազանության դիտարկում,

տարեկան մեկ անգամ,

4. Աղմուկի մակարդակի վերահսկողություն, եռամսյակը մեկ անգամ :

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում :

Կենսաբազմազնության դիտարկումը կատարվելու է համապատասխան մասնագետների կողմից (բուսաբան, կենսաբան)՝ պայմանագրային հիմունքներով:

Մշտադիտարկման տեսակների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է նաև աղյուսակ 11-ում :

Մշտադիտարկումների կատարման համար տարեկան նախատեսվում է մասնահանել 200.0հազ.դրամ, իսկ բնապահպանական միջոցառումների իրականացման համար՝ 150000 ՀՀ դրամ: :

Շրջակա միջավայրի վրա ազդեցության աղտոտման կանխարգելման մոնիտորինգի կետերի նախնական տեղադիրքը ներկայացված է ստորև նկար 15-ում:

«Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N 191-Ն որոշման համաձայն ներկայացվում է մշտադիտարկումների աղյուսակ

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾԵՆ ՈՒ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
Մթնոլորտային օդ	Երևակման տարածք	- հանքափոշի, այդ թվում՝ ծանր մետաղներ և կախյալ մասնիկներ (PM10 և PM2.5), ածխածնի օքսիդ, ածխաջրածիններ, ազոտի օքսիդներ, մուր, ծծմբային անհիդրիդ, բենզ(ա)պիրեն, մանգանի օքսիդներ, ֆտորիդներ, երկաթի օքսիդներ, ֆտորաջրածին	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Հողային ծածկույթ	Երևակման տարածք,	- հողերի քիմիական կազմը (рН, կատիոնափոխանակման հատկությունները, էլեկտրահաղորդականության հատկանիշներ, մետաղների պարունակությունը՝ Fe, Ba, Mn, Zn, Sr, B, Cu, Mo, Cr, Co, Hg, As, Pb, Ni, V, Sb, Se), -- հողերում նավթամթերքների պարունակությունը	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	- տարեկան մեկ անգամ - ամսական մեկ անգամ
Ջրային ռեսուրսներ	Սև ջուր, Հրազդան գետ	Ջրի որակական անալիզներ	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ	- ամսական մեկ անգամ
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, Էնդեմիկ տեսակներ	Երևակման տարածք և տարածքին հարակից շրջան	տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	տարեկան մեկ անգամ

Աղմուկ և թրթռումներ	Երևակման տարածք	Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ, մեքենաների տեղաշարժ	Չափումներ գործիքային	Չափումներ, եռամսյակը մեկ անգամ
---------------------	-----------------	---	----------------------	--------------------------------



---մթնոլորտային օդի, հողային ռեսուրսների և կենսաբազմազանության մշտադիտարկման կետ

----աղմուկի և ջրային ռեսուրսի մշտադիտարկման կետ

Օգտագործված գրականության ցանկ

1. «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ -ի տվյալներ
2. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
3. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
4. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
5. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
6. Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954
8. “Растительность Армянской ССР”. Магакьян А.К.
9. “Флора, растительность и растительные ресурсы Армении”, Институт ботаники НАН РА Армянское ботаническое общество. Ереван
10. “Дикорастущие съедобные растения Армении”. А.П. Тер-Восканян, Ученые записки Ереванского государственного института.
11. “Цветущие уголки биоразнообразия”, FAO,
<http://www.fao.org/3/i1687r/i1687r08.pdf>
12. ՀՀ Արարատի մարզպետարանի պաշտոնական կայք